

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Ընթացիկ գործառնություններ)

(Երեւանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

միջեւ

ԱՄՍԱԹԻՎ 2023թ. նոյեմբերի 27

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Ընթացիկ գործառնություններ)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ թվագրված 2023թ. նոյեմբերի 27-ով,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) և ԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) միջև:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ՝

Ա) Վարկառուն դիմել է ԱԶԲ վարկ ստանալու համար՝ սույն վարկային համաձայնագրի ժամանակացույց 1-ում նկարագրված Ծրագրի նպատակների համար,

Բ) Ծրագիրն իրականացվելու է Երեւանի քաղաքապետարանի («ԾԻՄ», ինչպես սահմանված է ստորև 1.02(ժգ) կետով) կողմից, և այդ նպատակով Վարկառուն սույնով նախատեսված վարկի միջոցները տրամադրելու է ԾԻՄ-ին՝ ԱԶԲ-ի համար ընդունելի պայմաններով, և

Գ) ԱԶԲ-ն համաձայնել է վարկ տրամադրել Վարկառուին ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից՝ սույնով և ԱԶԲ-ի ու ԾԻՄ-ի միջև սույնի հետ նույն ամսաթվով կնքված՝ Ծրագրի մասին համաձայնագրով սահմանված պայմաններով,

ԱՅՍՊԻՍՈՎ, կողմերը համաձայնության են գալիս հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I

Վարկային կանոնակարգեր, սահմանումներ

Կետ 1.01. ԱԶԲ-ի՝ 2022 թվականի հունվարի 1-ի Ընթացիկ

գործառնությունների մասով Վարկային կանոնակարգերի (Վարկային կանոնակարգեր) բոլոր դրույթները սույնով դառնում են կիրառելի սույն վարկային համաձայնագրի նկատմամբ նույն ուժով եւ գործողությամբ այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին սույն համաձայնագրում՝ հաշվի առնելով, սակայն, հետեւյալ փոփոխությունները.

ա) 2.01(rr) կետը հանվել է եւ փոխարինվել հետեւյալով.

«Ծրագրի մասին համաձայնագիր» եզրույթը նշանակում է սույնի հետ նույն ամսաթվով Ծրագրի մասին համաձայնագիր ԱԶԲ-ի եւ Երեւանի քաղաքապետարանի միջեւ, ընդ որում՝ այդ Համաձայնագիրը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել, եւ ծրագրի մասին նման համաձայնագիրը ներառում է Ծրագրի մասին համաձայնագրի բոլոր ժամանակացույցները:

բ) Վարկային կանոնակարգերի 7.01(ա)(i), 9.01(դ), 9.01(զ), 9.01(ի), 10.01(զ) եւ 10.02(զ) կետերում նշված «Ծրագիրը կատարող մարմին» եզրույթը պետք է փոխարինել «Երեւանի քաղաքապետարան» եզրույթով:

Կետ 1.02. Սույն վարկային համաձայնագրում կիրառվելու դեպքում Վարկային կանոնակարգերում սահմանված մի շարք եզրույթներ ունեն դրանցում սահմանված համապատասխան իմաստները, բացառությամբ, եթե չեն փոփոխվել սույնով, կամ եթե ենթատեքստից այլ բան չի պահանջվում: Սույն վարկային համաձայնագրում կիրառված մյուս եզրույթներն ունեն հետեւյալ իմաստները.

ա) «Խորհրդատվական ծառայություններ» նշանակում է Գնումների կանոնակարգերում նկարագրված եւ Գնումների պլանում սահմանված խորհրդատվական ծառայությունները, որոնք պետք է ֆինանսավորվեն Վարկի միջոցներից.

բ) «ԲԿՊ» նշանակում է Ծրագրի բնապահպանական կառավարման պլանը, ներառյալ՝ դրանում կատարված ցանկացած թարմացում, որն ընդգրկված է ՇՄՆՈՒ-ում.

գ) «Բնապահպանական երաշխիքներ» նշանակում է Անվտանգության

մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (SPS) V գլխում, 1-ին հավելվածում եւ 4-րդ հավելվածում (ըստ անհրաժեշտության) սահմանված սկզբունքները եւ պահանջները.

դ) «Եվրո» կամ «Ե» նշանը նշանակում է Եվրոպական միության 27 անդամ պետություններից 20-ի պաշտոնական արժույթը.

ե) «ԳԳՊ/GAP» նշանակում է Ծրագրի համար գենդերային գործողությունների պլանը, ներառյալ՝ դրանում կատարված ցանկացած թարմացում, որը նախապատրաստվել է Վարկառուի կողմից եւ հաստատվել ԱԶԲ-ի կողմից.

զ) «Ապրանքներ» նշանակում է Գնումների պլանով նախատեսված եւ Վարկի միջոցներից ֆինանսավորվող սարքավորումներ ու նյութեր, ներառյալ՝ դրանց հետ կապված Ոչ խորհրդատվական ծառայությունները, ինչպիսիք են փոխադրումը, ապահովագրությունը, տեղադրումը, շահագործման մեջ դնելը, վերապատրաստումը եւ նախնական պահպանումը.

է) «ՄԻԱՎ/ԶԻԱՀ» նշանակում է մարդու իմունային անբավարարության վիրուս/ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ.

ը) «ՇՄՆՈՒ» նշանակում է Ծրագրի համար շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն, ներառյալ՝ դրանում կատարված ցանկացած թարմացում, որը նախապատրաստվել եւ ներկայացվել է Վարկառուի կողմից եւ հաստատվել է ԱԶԲ-ի կողմից.

թ) «Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներ» նշանակում է Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի V գլխում, 2-րդ հավելվածում եւ 4-րդ հավելվածում (ըստ անհրաժեշտության) նախատեսված սկզբունքները եւ պահանջները.

ժ) «ՀԶՏՊ» նշանակում է Ծրագրի համար հողի ձեռքբերման եւ տարաբնակեցման պլան, ներառյալ՝ դրանում կատարված ցանկացած թարմացում, որը նախապատրաստվել եւ ներկայացվել է Վարկառուի կողմից եւ հաստատվել է ԱԶԲ-ի կողմից.

ժա) «Վարկային հատկացումների ձեռնարկ» նշանակում է ԱԶԲ-ի Վարկային հատկացումների ձեռնարկը (2022 թվական, որում ժամանակ առ ժամանակ փոփոխություններ են արվում)։

ժբ) «ՏԿԵՆ» նշանակում է Վարկառուի Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը։

ժգ) «Ոչ խորհրդատվական ծառայություններ» նշանակում է Գնումների կանոնակարգերում նկարագրված եւ Գնումների պլանում սահմանված ոչ խորհրդատվական ծառայությունները, որոնք պետք է ֆինանսավորվեն Վարկի միջոցներից։

ժդ) «ՇԵՍ» նշանակում է շահագործում եւ սպասարկում։

ժե) «ԾԿՁ» նշանակում է Ծրագրի համար Ծրագրի կառավարման ձեռնարկը՝ 2023թ. օգոստոսի 24-ով թվագրված եւ Վարկառուի ու ԱԶԲ-ի միջեւ համաձայնեցված, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է՝ Վարկառուի եւ ԱԶԲ-ի համապատասխան վարչական ընթացակարգերի համաձայն։

ժզ) «ԾԻՄ» նշանակում է Ծրագիրն իրականացնող մարմին, որը Երևանի քաղաքապետարանն է՝ պատասխանատու Ծրագրի ամենօրյա իրականացման համար, կամ նրա իրավահաջորդը։

ժէ) «Գնումների պլան» նշանակում է Ծրագրի գնումների պլանը՝ թվագրված 2023թ. օգոստոսի 24-ով եւ համաձայնեցված Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ, որը

ժամանակ առ ժամանակ թարմացվում է՝ Գնումների քաղաքականությանը, Գնումների կանոնակարգերին եւ ԱԶԲ-ի հետ համաձայնեցված մյուս պայմանավորվածություններին համապատասխան։

ժը) «Գնումների քաղաքականություն» նշանակում է ԱԶԲ-ի Գնումների քաղաքականությունը՝ Ապրանքներ, Աշխատանքներ, Ոչ խորհրդատվական եւ խորհրդատվական ծառայություններ (2017 թվական, որում ժամանակ առ

ժամանակ փոփոխություններ են արվում)։

ժթ) «Գնումների կանոնակարգեր» նշանակում է ԱԶԲ-ի Գնումների կանոնակարգերը ԱԶԲ-ի Վարկառուների համար՝ Ապրանքներ, Աշխատանքներ, Ոչ խորհրդատվական եւ Խորհրդատվական ծառայություններ (2017 թվական, որում ժամանակ առ ժամանակ փոփոխություններ են արվում)։

ի) «Ծրագիրը կատարող մարմին»՝ Վարկային կանոնակարգերի նպատակներով եւ իմաստով նշանակում է ՏԿԵՆ-ը կամ դրա՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ցանկացած իրավահաջորդ, որը պատասխանատու է Ծրագրի կատարման համար։

իա) «Ծրագրի օբյեկտներ»՝ նշանակում է Ծրագրի շրջանակներում կառուցվող, գնվող, վերականգնվող եւ (կամ) պահպանվող օբյեկտներ։

իբ) «Երաշխիքների մոնիթորինգի հաշվետվություն» նշանակում է Վարկառուի կողմից պատրաստված եւ ԱԶԲ-ին ներկայացված յուրաքանչյուր հաշվետվություն, որը նկարագրում է ԲԿՊ-ի իրականացման առաջընթացը եւ դրան համապատասխանությունը, ներառյալ՝ ցանկացած ուղղիչ եւ կանխարգելիչ գործողություններ։

իգ) «Ծառայություններ» նշանակում է Խորհրդատվական ծառայություններ եւ Ոչ խորհրդատվական ծառայություններ։

իդ) «SPS» նշանակում է Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթուղթ (2009 թվական), եւ

իե) «Աշխատանքներ» նշանակում է Գնումների պլանով նախատեսված եւ Վարկի միջոցներից ֆինանսավորվող կառուցապատման կամ շինարարական աշխատանքներ, ներառյալ՝ դրանց հետ կապված Ոչ խորհրդատվական ծառայությունները, եւ ծրագրի հետ կապված ծառայություններ, որոնք տրամադրվում են որպես միասնական պատասխանատվության կամ լիավարտ հիմունքներով հանձնման պայմանագրի մաս։

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Կետ 2.01. ա) ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Վարկառուին տրամադրել վաթսուն միլիոն իննսուն հազար եվրոյի (€60,090,000) չափով վարկ, ընդ որում՝ նշված գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն վարկային համաձայնագրի 2.06 կետի դրույթներին համապատասխան:

բ) Վարկն ունի մայր գումարի 17 տարի մարման ժամկետ եւ վարկի արտոնյալ ժամանակահատված՝ համաձայն սույն կետի «գ» պարբերության:

գ) Սույն կետի «բ» պարբերության մեջ օգտագործված «արտոնյալ ժամանակահատված» եզրույթը նշանակում է Մայր գումարի առաջին մարման ամսաթվին նախորդող ժամանակահատվածը՝ սույն վարկային համաձայնագրի ժամանակացույց 1-ում սահմանված մարման ժամանակացույցի համաձայն:

Կետ 2.02. Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսագումար վարկի՝ ժամանակ առ ժամանակ առհանված եւ դեռեւս չվճարված մայր գումարի նկատմամբ՝ յուրաքանչյուր Տոկոսագումարի վճարման ժամանակահատվածի համար հետեւյալի հանրագումարի չափով.

ա) Euribor/Եվրոպական միջբանկային առաջարկի տոկոսադրույքի,

բ) 0.60%-ի, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.02 կետով՝ հանած 0.10%, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.03 կետով, եւ

գ) մարման հավելավճարի (maturity premium) 0.30%-ի չափով, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.03 կետով:

Կետ 2.03. Վարկառուն տարեկան վճարում է 0.15%-ի չափով պարտավորավճար: Այդ գումարը հաշվեգրվում է Վարկի ամբողջական գումարի

նկատմամբ (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները)՝ սկսած սույն վարկային համաձայնագրի ամսաթվին հաջորդող 60-րդ օրվանից հետո:

Կետ 2.04. Վարկի տոկոսագումարը եւ այլ վճարներ կատարվում են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին եւ հուլիսի 15-ին:

Կետ 2.05. Վարկառուն Վարկային հաշվից առհանված Վարկի մայր գումարը վերադարձնում է սույն վարկային համաձայնագրի ժամանակացույց 2-ում սահմանված դրույթներին համապատասխան:

Կետ 2.06. ա) Պարտքի ողջամիտ կառավարման նպատակով Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ դիմել Վարկի պայմաններում հետեւյալ Փոխարկումները կատարելու խնդրանքով.

i) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա՝ ինչպես առհանված եւ չվճարված, այնպես էլ չառհանված մասի Վարկի արժույթի փոխարինում որեւէ այլ Հաստատված արժույթով,

ii) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա՝ ինչպես առհանված, այնպես էլ դեռեւս չվճարված մասի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի բազայի փոփոխում Լողացող տոկոսադրույքից Ֆիքսված տոկոսադրույքի կամ հակառակը, եւ

iii) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա՝ ինչպես առհանված, այնպես էլ դեռեւս չվճարված մասի նկատմամբ կիրառելի Լողացող տոկոսադրույքի սահմանափակում՝ նշված Լողացող տոկոսադրույքի նկատմամբ Տոկոսադրույքի սահմանային չափը հաստատելու կամ Տոկոսադրույքի առավելագույն եւ նվազագույն շեմերը սահմանելու միջոցով:

բ) Սույն կետի «ա» պարբերության համաձայն փոխարկման ցանկացած պահանջ, որն ընդունվում է ԱԶԲ-ի կողմից, համարվում է «Փոխարկում», ինչպես սահմանված է Վարկային կանոնակարգերի 2.01(ե) կետում, եւ այն ուժի մեջ է մտնում Վարկային կանոնակարգերի V հոդվածի եւ Փոխարկման ուղեցույցների

դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ III

Վարկային միջոցների օգտագործումը

Կետ 3.01. Վարկառուն Վարկային միջոցները տրամադրում է ԾԻՄ-ին՝ ԱԶԲ-ի համար ընդունելի պայմաններով, եւ ապահովում է, որ ԾԻՄ-ը այդ միջոցներն օգտագործի Ծրագրի ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ սույն վարկային համաձայնագրի եւ Ծրագրի մասին համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Կետ 3.02. Վարկային միջոցները բաշխվում եւ առհանվում են սույն վարկային համաձայնագրի ժամանակացույց 3-ի դրույթներին համապատասխան: Նշված ժամանակացույցը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ:

Կետ 3.03. Բացառությամբ ԱԶԲ-ի համաձայնության այլ դեպքերի՝ Վարկառուն գնում է կամ ապահովում է, որ գնվեն ծախսերի հոդվածները, որոնք ֆինանսավորվելու են Վարկային միջոցներից՝ սույն վարկային համաձայնագրի ժամանակացույց 4-ի դրույթներին համապատասխան:

Կետ 3.04. Վարկային կանոնակարգերի 9.02 կետի նպատակներով Վարկի փակման ամսաթիվ է համարվում 2028 թվականի մարտի 31-ը կամ այն ամսաթիվը, որը ժամանակ առ ժամանակ կարող է համաձայնեցվել Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պայմաններ

Կետ 4.01. Ծրագիրը եւ Ծրագրի օբյեկտների շահագործումն

իրականացնելիս Վարկառուն կատարում է սույն վարկային համաձայնագրի ժամանակացույց 4-ում եւ Ծրագրի մասին համաձայնագրում նախատեսված բոլոր պարտավորությունները կամ ապահովում է դրանց կատարումը:

Կետ 4.02. Վարկառուն հնարավորություն է տալիս ԱԶԲ-ի ներկայացուցիչներին իրականացնելու Ծրագրի, Ապրանքների, Աշխատանքների եւ Ծառայությունների, ինչպես նաեւ ցանկացած համապատասխան գրառման ու փաստաթղթերի ստուգումներ:

Կետ 4.03. Վարկառուն ձեռնարկում է բոլոր գործողությունները, որոնք իր մասով անհրաժեշտ են՝ Ծրագրի մասին համաձայնագրի համաձայն ԾԻՄ-ին իր պարտավորությունները կատարելու հնարավորություն տալու համար, եւ չի ձեռնարկում կամ թույլատրում որեւէ գործողություն, որը կարող է խոչընդոտել այդ պարտավորությունների կատարումը:

ՀՈԴՎԱԾ V

Ուժի մեջ մտնելը

Կետ 5.01. Վարկային կանոնակարգերի 10.04 կետի նպատակներով սույն վարկային համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն վարկային համաձայնագրի ամսաթվից 90 օր հետո:

ՀՈԴՎԱԾ VI

Լիազորության պատվիրակումը

Կետ 6.01. Սույնով Վարկառուն ԾԻՄ-ին նշանակում է որպես իր գործակալ՝

սույն վարկային համաձայնագրի 3.02, 3.03 եւ 3.04 կետերի եւ Վարկային կանոնակարգերի 6.01, 6.02, 6.03 եւ 6.04 կետերի համաձայն պահանջվող կամ թույլատրված ցանկացած գործողություն ձեռնարկելու կամ համաձայնագիր կնքելու նպատակներով:

Կետ 6.02. Սույն վարկային համաձայնագրի 6.01 կետով վերապահված լիազորության համաձայն ԾԻՄ-ի կողմից ձեռնարկված ցանկացած գործողություն կամ կնքված ցանկացած համաձայնագիր ամբողջությամբ պարտադիր է Վարկառուի համար, եւ ունի այն նույն ուժը եւ ազդեցությունը, որը կունենար Վարկառուի կողմից ձեռնարկվելու դեպքում:

Կետ 6.03. Սույն վարկային համաձայնագրի 6.01 կետի համաձայն ԾԻՄ-ին վերապահված լիազորությունը կարող է Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ համաձայնությամբ չեղյալ համարվել կամ փոփոխվել:

ՀՈԴՎԱԾ VII

Այլ դրույթներ

Կետ 7.01. Վարկառուի Ֆինանսների նախարարը հանդես է գալիս որպես Վարկառուի ներկայացուցիչ՝ Վարկային կանոնակարգերի 12.02 կետի նպատակներով:

Կետ 7.02. Վարկային կանոնակարգերի 12.01 կետի նպատակներով նշվում են հետեւյալ հասցեները.

Վարկառուի համար՝

Ֆինանսների նախարարություն
Հայաստանի Հանրապետություն,
ք. Երեւան, 0010,
Մելիք-Ադամյան 1
Ֆաքս՝

(374 11) 800-132

ԱԶԲ-ի համար՝

Ասիական զարգացման բանկ
Ֆիլիպիններ, ք. Մանդալայոնգ,
1550 Մետրո Մանիլա,
ԱԶԲ պողոտա 6

Ֆաքս՝

(632) 8636-2444

(632) 8636-2424.

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն համաձայնագրի կողմերը, գործելով իրենց պատշաճորեն լիազորված ներկայացուցիչների միջոցով, ապահովում են, որ սույն վարկային համաձայնագիրն ստորագրվի վերը նշված առաջին օրվա եւ տարվա դրությամբ իրենց համապատասխան անունից եւ հանձնվի ԱԶԲ-ի գլխամասային գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վահե Հովհաննիսյան

ՀՀ ֆինանսների նախարար

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

Դոնալդ Լամբերտ

ԱԶԲ հայաստանյան գրասենյակի տնօրեն

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 1

Ծրագրի նկարագրությունը

1. Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքային շարժունակությունը, քաղաքային կառավարումը եւ բարելավել նախագիծը:

2. Ծրագիրը բաղկացած է հետեւյալ միջանկյալ արդյունքներից.

ա) **Միջանկյալ արդյունք 1. Քաղաքային կայուն եւ ներառական շարժունակությունն ու ծառայությունները բարելավվել են:**
Կառուցել/կառուցապատել՝ i) Իսակով–Արշակունյաց քաղաքային ճանապարհը, ii) կամուրջ Հրազդան գետի վրայով, iii) հետիոտնային գետնանցումներ՝ շարժունակության խանգարումներ ունեցող անձանց համար համընդհանուր հասանելիությամբ եւ բավականաչափ լայնությամբ, iv) ճանապարհային անվտանգության ենթակառուցվածքներ, v) հարակից ջրահեռացման համակարգեր, vi) դիմակայության շեշտադրումով կանաչապատում, vii) Կոմիտասի անվան զբոսայգու վերականգնումը, viii) ճանապարհի եւ զբոսայգու երկայնքով տնկված նոր ծառեր, եւ ix) գեղեցիկագույն հատկանիշներ, ներառյալ՝ լուսադիոդային փողոցային լույսերը:

բ) **Միջանկյալ արդյունք 2. Կանաչ եւ ներառական քաղաքային շարժունակության ինստիտուցիոնալ կարողությունը հզորացել է:** Աջակցել՝ i) կայուն շարժունակության միջանցքի հայեցակարգային նախագծի նախապատրաստմանը, ii) Երեւանի քաղաքապետարանի կարողությունների զարգացմանը՝ PM2.5-ի մոնիթորինգի կետերի (20 հատ) շահագործման եւ սպասարկման համար, եւ iii) քաղաքային զարգացման համար պետական-մասնավոր գործընկերության խթանմանը:

3. Վերոնշյալ Միջանկյալ արդյունք 2-ը ֆինանսավորվելու է ԱԶԲ տեխնիկական աջակցության միջոցով:

4. Ակնկալվում է, որ Ծրագիրը կավարտվի 2027 թվականի սեպտեմբերի 30-ին:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2

Մարման ժամանակացույց

1. Հետեւյալ աղյուսակում սահմանվում են Վարկի Մայր գումարի մարման ամսաթվերը եւ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի վճարվող Վարկի ընդհանուր մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարը (Վճարման մասնաբաժին): Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված լինելու դեպքում Վարկի Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի Մայր գումարը որոշվում է ԱԶԲ-ի կողմից՝ բազմապատկելով՝ ա) Վարկի ընդհանուր մայր գումարը, որն առհանվել եւ չի մարվել Մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ, բ) Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվի դրությամբ Վճարման մասնաբաժնով. այդպիսի մարման գումարն ըստ անհրաժեշտության ճշգրտվում է սույն ժամանակացույցի 4-րդ պարբերությունում նշված գումարները նվազեցնելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

Մարման ամսաթիվը	ւ մասնաբաժին ւ արտահայտությամբ)
2034թ. հունվարի 15	2.941176
2034թ. հուլիսի 15	2.941176
2035թ. հունվարի 15	2.941176
2035թ. հուլիսի 15	2.941176
2036թ. հունվարի 15	2.941176
2036թ. հուլիսի 15	2.941176
2037թ. հունվարի 15	2.941176
2037թ. հուլիսի 15	2.941176
2038թ. հունվարի 15	2.941176
2038թ. հուլիսի 15	2.941176
2039թ. հունվարի 15	2.941176
2039թ. հուլիսի 15	2.941176
2040թ. հունվարի 15	2.941176
2040թ. հուլիսի 15	2.941176
2041թ. հունվարի 15	2.941176
2041թ. հուլիսի 15	2.941176

2042թ. հունվարի 15	2.941176
2042թ. հուլիսի 15	2.941176
2043թ. հունվարի 15	2.941176
2043թ. հուլիսի 15	2.941176
2044թ. հունվարի 15	2.941176
2044թ. հուլիսի 15	2.941176
2045թ. հունվարի 15	2.941176
2045թ. հուլիսի 15	2.941176
2046թ. հունվարի 15	2.941176
2046թ. հուլիսի 15	2.941176
2047թ. հունվարի 15	2.941176
2047թ. հուլիսի 15	2.941176
2048թ. հունվարի 15	2.941176
2048թ. հուլիսի 15	2.941176
2049թ. հունվարի 15	2.941176
2049թ. հուլիսի 15	2.941176
2050թ. հունվարի 15	2.941176
2050թ. հուլիսի 15	2.941192
Ընդամենը	100.000000

2. Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու դեպքում Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի Մայր գումարը որոշվում է հետեւյալ կերպ.

ա) Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցների առհանման չափով Վարկառուն վերադարձնում է այդ օրվա դրությամբ առհանված եւ չվճարված գումարը՝ սույն Ժամանակացույցի 1-ին պարբերությունում նախատեսված կարգով, եւ

բ) Մայր գումարի առաջին մարման ամսաթվից հետո կատարված ցանկացած առհանման դեպքում այդ գումարները վերադարձվում են նման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվին՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանված գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սույն Ժամանակացույցի 1-ին պարբերության աղյուսակում սահմանված՝ Մայր գումարի

տվյալ մարման ամսաթվի դրությամբ սկզբնական Վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ ամսաթվին կամ դրանից հետո ընկած ժամանակահատվածի համար Մայր գումարի մարման մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարը: Վճարվող նման գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են սույն ժամանակացույցի 4-րդ պարբերությունում նշված ցանկացած գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. Բացառապես Մայր գումարի ցանկացած մարման ամսաթվի դրությամբ վճարվելիք մայր գումարները հաշվարկելու նպատակներով Մայր գումարի մարման որեւէ ամսաթվի նախորդող երկու օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները դիտարկվում են որպես առհանված եւ չվճարված՝ առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվի դրությամբ, եւ ենթակա են վճարման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվից սկսած՝ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի:

4. Անկախ սույն ժամանակացույցի 1-ին եւ 2-րդ պարբերություններում սահմանված դրույթներից՝ Վարկի մայր գումարի առհանված ամբողջ գումարը կամ դրա մի մասը Հաստատված արժույթի փոխարկելու դեպքում այդպիսի Հաստատված արժույթի փոխարկված գումարի չափը, որը ենթակա է վճարման Փոխարկման ժամանակահատվածում ընկնող Մայր գումարի մարման ցանկացած ամսաթվի դրությամբ, սահմանվում է ԱԶԲ-ի կողմից՝ նշված Փոխարկումից անմիջապես առաջ եղած արժույթով արտահայտված գումարը բազմապատկելով կա՛մ ա) արժույթի փոխարժեքով, որն արտացոլում է տվյալ փոխարկման հետ կապված Արժույթի հեջավորման գործարքի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից վճարվելիք՝ վերոնշյալ Հաստատված արժույթով արտահայտված մայր գումարները, կա՛մ բ) Սահմանված տոկոսադրույքի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով, եթե ԱԶԲ-ն այդպես որոշի Փոխարկման ուղեցույցների համաձայն:

5. Եթե Վարկի մայր գումարի առհանված եւ չվճարված մասը ժամանակ

առ ժամանակ արտահայտվում է Վարկի գումարի՝ մեկից ավելի արժույթներով, ապա սույն ժամանակացույցի դրույթները կիրառվում են Վարկի յուրաքանչյուր արժույթով արտահայտված գումարի համար առանձին այնպես, որ յուրաքանչյուր այդպիսի գումարի համար ստեղծվի մարման առանձին ժամանակացույ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 3

Վարկային միջոցների հատկացում եւ առհանում

Ընդհանուր դրույթներ

1. Սույն Ժամանակացույցին կից ներկայացված աղյուսակում բերված են ծախսերի հոդվածների կատեգորիաները, որոնք պետք է ֆինանսավորվեն Վարկային միջոցներից, եւ յուրաքանչյուր նման կատեգորիայի համար Վարկային միջոցների հատկացումը (Աղյուսակ): (Սույն Ժամանակացույցում «Կատեգորիա»-ին կատարված հղումը վերաբերում է Աղյուսակի Կատեգորիային կատարված հղմանը):

Վարկային հաշվից առհանման հիմքերը

2. Բացառությամբ ԱԶԲ-ի համաձայնության այլ դեպքերի՝ Վարկային միջոցները բաշխվում են ծախսերի հոդվածներին եւ հատկացվում Աղյուսակում ներկայացված ծախսերի յուրաքանչյուր հոդվածի համար առհանման տոկոսի հիման վրա:

Տոկոսավճարներ եւ պարտավորավճարներ

3. «Տոկոսավճարներ եւ պարտավորավճարներ» Կատեգորիային հատկացված գումարը նախատեսված է Ծրագրի իրականացման Ժամանակահատվածում Վարկի տոկոսավճարները եւ պարտավորավճարները ֆինանսավորելու համար: ԱԶԲ-ն իրավունք ունի Վարկային հաշվից առհանելու եւ Վարկառուի անունից իրեն վճարելու այդ տոկոսավճարների եւ պարտավորավճարների համար նախատեսվող գումարները դրանց վճարման

ամսաթվին:

Վերաբաշխում

4. Չնայած Աղյուսակում ներկայացված Վարկային միջոցների բաշխմանը եւ առհանման տոկոսներին՝

ա) եթե պարզվում է, որ որեւէ Կատեգորիայի հատկացված Վարկի գումարն անբավարար է այդ Կատեգորիայի համաձայնեցված բոլոր ծախսերը ֆինանսավորելու համար, ապա ԱԶԲ-ն կարող է Վարկառուին ծանուցելու միջոցով՝ i) գնահատված պակասուրդը փակելու համար պահանջվող չափով՝ տվյալ Կատեգորիային վերաբաշխել Վարկի գումարները, որոնք հատկացվել են մեկ այլ Կատեգորիայի, սակայն ԱԶԲ-ի կարծիքով՝ անհրաժեշտ չեն մյուս ծախսերը բավարարելու համար, եւ ii) եթե այդպիսի վերաբաշխումը չի կարող ամբողջությամբ փակել գնահատված պակասուրդը, ապա նվազեցնել այդ ծախսերի նկատմամբ կիրառվող առհանման տոկոսը, որպեսզի այդ Կատեգորիայի ներքո հետագա առհանումները կարողանան շարունակվել մինչեւ դրանում ներառված բոլոր ծախսերը կատարվելը, եւ

բ) եթե պարզվում է, որ որեւէ Կատեգորիայի հատկացված Վարկի գումարը գերազանցում է տվյալ Կատեգորիայում եղած բոլոր համաձայնեցված ծախսերը, ապա ԱԶԲ-ն կարող է Վարկառուին ծանուցելու միջոցով վերաբաշխել այդ ավելցուկային գումարը որեւէ այլ Կատեգորիայի:

Հատկացման ընթացակարգեր

5. Բացառությամբ ԱԶԲ-ի համաձայնության այլ դեպքերի՝ Վարկային միջոցները հատկացվում են Վարկային հատկացումների ձեռնարկին համապատասխան:

Ժամանակացույց 3-ի հավելված

Աղյուսակ

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԵՎ ԱՌՀԱՆՈՒՄ			
Համար	Հոդված	ԱԶԲ ֆինանսավորման համար հատկացված ընդհանուր գումարը (€)	Վարկային հաշվից առհանման հիմքը
		Կատեգորիա	
1	Աշխատանքներ եւ ծառայություններ	42,120,000	պահանջված ընդհանուր ծախսերի 83.33%-ը *
2	Ծրագրի կառավարում	810,000	պահանջված ընդհանուր ծախսերի 73.92%-ը*
3	Տարաբնակեցում	4,910,000	պահանջված ընդհանուր ծախսերի 100%-ը*
4	Տոկոսավճարներ եւ պարտավորավճարներ	5,050,000	վճարման ենթակա գումարի 100%-ը
5	Չհատկացված	7,200,000	
	ԸՆԴԱՄԵՆԸ	60,090,000	

* Առանց Վարկառուի երկրի տարածքում հարկերի եւ տուրքերի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 4

Ծրագրի կատարում. բնապահպանական, սոցիալական, ֆինանսական եւ այլ հարցեր

Իրականացման մեխանիզմներ

1. Վարկառուն ապահովում է կամ այնպես է անում, որ Երեւանն ապահովի, որ Ծրագիրն իրականացվի ԾԿՁ-ում սահմանված մանրամասն մեխանիզմներին համապատասխան: ԾԿՁ-ի ցանկացած հետագա փոփոխություն ուժի մեջ է մտնում միայն Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից տվյալ փոփոխությունը հաստատելուց հետո: ԾԿՁ-ի եւ սույն վարկային համաձայնագրի միջեւ որեւէ անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն վարկային համաձայնագրի դրույթները:

Գնումներ

2. Վարկառուն ապահովում է կամ այնպես է անում, որ Երեւանն ապահովի, որ՝

ա) Ապրանքների, Աշխատանքների եւ Ծառայությունների գնումները կատարվեն Գնումների քաղաքականությանը եւ Գնումների կանոնակարգերին համապատասխան,

բ) Ապրանքները, Աշխատանքները եւ Ծառայությունները գնվեն Գնումների պլանում նախատեսված մանրամասն մեխանիզմների հիման վրա, ներառյալ՝ գնումների եւ ընտրության մեթոդները, մրցութային փաստաթղթերի տեսակը եւ ԱԶԲ-ի վերանայման պահանջները: Վարկառուն կարող է փոփոխել Գնումների պլանում սահմանված մանրամասն մեխանիզմները միայն ԱԶԲ-ի նախնական համաձայնությամբ, եւ նման փոփոխությունները պետք է սահմանվեն Գնումների պլանի թարմացումներում, եւ

գ) i) բոլոր գնվող Ապրանքներն ու Աշխատանքները եւ ձեռքբերված ծառայությունները (ներառյալ՝ ամբողջ համակարգչային տեխնիկան, ծրագրերը եւ համակարգերը, անկախ այն հանգամանքից՝ առանձին են գնվել, թե ներառված են գնված այլ ապրանքների եւ ծառայությունների մեջ) չխախտեն կամ չոտնահարեն որեւէ արտադրական սեփականության կամ մտավոր սեփականության իրավունք կամ որեւէ երրորդ կողմի պահանջ, եւ ii) Ապրանքների, Աշխատանքների եւ Ծառայությունների գնման բոլոր պայմանագրերը պարունակեն կապալառուի, մատակարարի, խորհրդատուի կամ ծառայություն մատուցողի կողմից համապատասխան ներկայացուցչություն, երաշխիքներ եւ անհրաժեշտության դեպքում փոխհատուցումներ (ինդեմնիտետ)՝ սույն ենթապարբերությամբ նախատեսված հարցերի առնչությամբ:

3. Վարկառուն չի կնքում Աշխատանքների կամ Ոչ խորհրդատվական ծառայությունների պայմանագրեր մինչեւ՝

ա) Վարկառուի օրենքներին եւ կանոնակարգերին համապատասխան՝ Վարկառուի համապատասխան բնապահպանական մարմնի կողմից չտրամադրվի ՇՄՆՈՒ-ի կամ այլ կիրառելի բնապահպանական փաստաթղթերի վերջնական հաստատումը, եւ ԾԻՄ-ը ձեռք չբերի ԱԶԲ-ի կողմից ՇՄՆՈՒ-ի հաստատումը՝ վերջնական նախագծի հիման վրա, եւ

բ) ԾԻՄ-ը չներառի ԲԿՊ-ի համապատասխան դրույթներն Աշխատանքների եւ Ոչ խորհրդատվական ծառայությունների պայմանագրում:

4. Վարկառուն չի կնքում հարկադիր տարաբնակեցման ազդեցություններ ներառող Աշխատանքների եւ Ոչ խորհրդատվական ծառայությունների որեւէ պայմանագիր՝ մինչեւ Վարկառուն չնախապատրաստի եւ ԱԶԲ-ին չներկայացնի Ծրագրի մանրամասն նախագծի վրա հիմնված վերջնական ՀՁՏՊ-ն եւ չստանա նման ՏՊ-ի մասով ԱԶԲ-ի հաստատումը:

Շրջակա միջավայր

5. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի եւ Ծրագրի բոլոր օբյեկտների

նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, շահագործումը եւ շահագործումից հանումը համապատասխանեն՝ ա) Վարկառուի՝ շրջակա միջավայրին, առողջապահությանը եւ անվտանգությանը վերաբերող բոլոր կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին, բ) Բնապահպանական երաշխիքներին, եւ գ) ՇՄՆՈՒ-ում, ԲԿՊ-ում սահմանված բոլոր միջոցառումներին եւ պահանջներին, եւ Երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությունում սահմանված ուղղիչ կամ կանխարգելիչ գործողություններին:

Հողի ձեռքբերում եւ հարկադիր տարաբնակեցում

6. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի համար պահանջվող բոլոր հողերը եւ ճանապարհի բոլոր իրավունքները տրվեն Աշխատանքների կապալառուին՝ Աշխատանքների կատարման պայմանագրի շրջանակներում համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան, եւ որ հողերի ձեռքբերման եւ տարաբնակեցման բոլոր գործողություններն իրականացվեն՝ ա) Վարկառուի՝ հողերի ձեռքբերման եւ հարկադիր տարաբնակեցմանը վերաբերող բոլոր կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին, բ) Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներին, եւ գ) ՀԶՏՊ-ում սահմանված բոլոր միջոցառումներին ու պահանջներին եւ Երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությամբ նախատեսված բոլոր ուղղիչ կամ կանխարգելիչ գործողություններին համապատասխան:

7. Առանց սահմանափակելու Հարկադիր տարաբնակեցման երաշխիքները կամ ՏՊ-ն՝ Վարկառուն ապահովում է, որ տեղի չունենա Ծրագրի հետ կապված որեւէ ֆիզիկական կամ տնտեսական տեղահանում մինչեւ՝

ա) ՀԶՏՊ-ի համաձայն՝ ազդեցության ենթակա անձանց չտրամադրվեն փոխհատուցում եւ այլ իրավունքներ, եւ

բ) ՀԶՏՊ-ի համաձայն՝ չստեղծվի եկամուտների եւ կենսաապահովման վերականգնման համապարփակ ծրագիր:

Բնիկ ժողովուրդներ

8. Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը չունենա բնիկ ժողովուրդների վրա որեւէ ազդեցություն՝ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի իմաստով: Այն դեպքում, երբ Ծրագիրն ունենում է որեւէ այդպիսի ազդեցություն, Վարկառուն ձեռնարկում է բոլոր այն քայլերը, որոնք պահանջվում են Վարկառուի կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին եւ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթին Ծրագրի համապատասխանությունն ապահովելու համար:

Մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ՝ երաշխիքների պահանջների իրականացման համար

9. Վարկառուն տրամադրում է անհրաժեշտ բյուջետային եւ մարդկային ռեսուրսները՝ ԲԿՊ-ն եւ ՀՁՏՊ-ն լիարժեքորեն իրականացնելու նպատակով:

Մրցութային փաստաթղթերում եւ Աշխատանքների կատարման պայմանագրերում երաշխիքների վերաբերյալ դրույթները

10. Վարկառուն ապահովում է, որ բոլոր մրցութային փաստաթղթերը եւ

Աշխատանքների կատարման պայմանագրերը պարունակեն դրույթներ, որոնցով կապալառուներից պահանջվում է՝

ա) կատարել ՇՄՆՈՒ-ով, ԲԿՊ-ով եւ ՀՁՏՊ-ով նախատեսված՝ կապալառուին վերաբերող բոլոր միջոցառումները (այնքանով, որքանով դրանք վերաբերում են շինարարության ընթացքում ազդեցություն կրող անձանց վրա ազդեցություններին) եւ Երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությունում նախատեսված ուղղիչ կամ կանխարգելիչ գործողությունները,

բ) տրամադրել բյուջե բոլոր նման բնապահպանական եւ սոցիալական միջոցառումների համար,

գ) Վարկառուին տրամադրել գրավոր ծանուցում Ծրագրի շինարարության, իրականացման կամ շահագործման ընթացքում ծագած չնախատեսված բնապահպանական, տարաբնակեցման կամ բնիկ ժողովուրդների նկատմամբ ռիսկերի կամ ազդեցությունների մասին, որոնք հաշվի չեն առնվել ՇՄՆՈՒ-ում, ԲԿՊ-ում եւ ՀՁՏՊ-ում,

դ) պատշաճորեն արձանագրել ճանապարհների, գյուղատնտեսական նշանակության հողերի եւ այլ ենթակառուցվածքների վիճակը՝ նախքան նյութեր փոխադրելը եւ շինարարությունն սկսելը, եւ

ե) ծրագրի ավարտին արահետները, այլ տեղական ենթակառուցվածքները եւ գյուղատնտեսական նշանակության հողերը վերականգնել՝ դրանք բերելով առնվազն նախքան ծրագիրը եղած վիճակին:

Երաշխիքների մոնիթորինգը եւ հաշվետվություններ ներկայացնելը

11. Վարկառուն իրականացնում կամ ապահովում է ԾԻՄ-ի կողմից հետևյալ գործողությունները՝

ա) ԱԶԲ-ին ներկայացնել Երաշխիքների մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություններ եւ ներկայացնելուց անմիջապես հետո այդ հաշվետվություններից համապատասխան տեղեկությունները հրապարակել ազդեցություն կրող անձանց համար,

բ) եթե Ծրագրի շինարարության, իրականացման կամ շահագործման ընթացքում առաջանում են անկանխատեսելի բնապահպանական եւ (կամ) սոցիալական ռիսկեր եւ ազդեցություններ, որոնք հաշվի չեն առնվել ՇՄՆՈՒ-ում, ԲԿՊ-ում եւ ՀՁՏՊ-ում, ապա անհապաղ տեղեկացնել ԱԶԲ-ին նման ռիսկերի կամ ազդեցությունների առաջացման մասին՝ այդ իրադարձության մանրամասն

նկարագրությամբ եւ առաջարկվող ուղղիչ գործողությունների պլանով, եւ

գ) հաղորդել ԲԿՊ-ում եւ ՀՁՏՊ-ում սահմանված միջոցառումների եւ պահանջների կատարման մասով փաստացի կամ հնարավոր խախտման մասին՝ այդ մասին տեղեկանալուց անմիջապես հետո:

Ներդրումների արգելված ցանկ

12. Վարկառուն ապահովում է, որ Վարկի միջոցները չօգտագործվեն Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի 5-րդ հավելվածով նախատեսված՝ արգելված ներդրումային գործողությունների ցանկում ներառված որեւէ գործողություն ֆինանսավորելու համար:

Աշխատանքային նորմատիվներ, առողջապահություն եւ անվտանգություն

13. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի իրականացման ընթացքում պահպանվեն հիմնական աշխատանքային նորմատիվները եւ Վարկառուի կիրառելի օրենքներն ու կանոնակարգերը: Վարկառուն մրցութային փաստաթղթերում եւ Ծրագրի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող պայմանագրերում ներառում է առանձին դրույթներ, որոնցով պահանջվում է, որ կապառալուները, ի թիվս այլնի, ա) պահպանեն Վարկառուի կիրառելի աշխատանքային օրենքներն ու կանոնակարգերը եւ կիրառեն աշխատատեղերում աշխատանքային անվտանգության նորմերը, բ) չօգտագործեն երեխաների աշխատանքը, գ) խտրականություն չդնեն աշխատողների միջեւ՝ զբաղվածության եւ մասնագիտական զբաղմունքի հարցում, դ) չօգտագործեն հարկադիր աշխատանքը, ե) թույլատրեն միավորումների ազատությունը եւ արդյունավետորեն ճանաչեն կոլեկտիվ բանակցությունների իրավունքը, եւ զ) տարածեն կամ ներգրավեն համապատասխան ծառայություններ մատուցողների, որպեսզի նրանք տարածեն տեղեկատվություն սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ռիսկերի մասին՝

Ծրագրի շրջանակներում ներգրավված կապալառուների աշխատողների եւ Ծրագրի տարածքը շրջապատող՝ տեղի համայնքների անդամների, մասնավորապես՝ կանանց շրջանում: Վարկառուն խստորեն մոնիթորինգի է ենթարկում սույն պարբերությունում սահմանված պահանջների կատարումը եւ ԱԶԲ-ին տրամադրում է պարբերական հաշվետվություններ:

Գենդերային հավասարություն եւ զարգացում

14. Վարկառուն ապահովում է, որ՝ ա) ԳԳՊ-ն իրականացվի իր պայմաններին համապատասխան, բ) մրցութային փաստաթղթերը եւ պայմանագրերը ներառեն կապալառուների համար՝ ԳԳՊ-ով սահմանված միջոցառումների կատարման վերաբերյալ համապատասխան դրույթներ, գ) հատկացվեն համապատասխան միջոցներ ԳԳՊ-ի իրականացման համար, դ) ԳԳՊ-ի իրականացման ընթացքը, ներառյալ՝ հիմնական գենդերային վերջնարդյունքների եւ միջանկյալ արդյունքի թիրախների ձեռքբերման ուղղությամբ առաջընթացը պարբերաբար ենթարկվեն մոնիթորինգի եւ զեկուցվեն ԱԶԲ-ին եւ ե) գենդերային հարցերով վերջնարդյունքի եւ միջանկյալ արդյունքների հիմնական թիրախները ներառեն հետեւյալը, առանց սահմանափակվելու դրանով. i) Ծրագրի հետ կապված խորհրդակցությունների ու հանդիպումների եւ Երեւան քաղաքի մակարդակով քաղաքաշինական նախագծերի եւ պայմանավորվածությունների մասով Ֆոկուս խմբերի եւ քննարկումների մասնակիցների առնվազն 30%-ը կանայք են, ii) քաղաքային զարգացմանն առնչվող վերապատրաստման դասընթացների մասնակիցների առնվազն 30%-ը կանայք են:

Գործընկերային աջակցություն

15. Ի լրումն Վարկի միջոցների՝ Վարկառուն հասանելի է դարձնում գործընկերների համապատասխան ֆինանսական միջոցները եւ այլ ռեսուրսներ եւ գործընկերների նման ֆինանսական միջոցները եւ ռեսուրսներ ժամանակին

դուրս է բերում Ծրագրի հաջող իրականացման համար: Ի լրումն նշվածի՝ Վարկառուն ապահովում է, որ ԾԻՄ-ը ունենա բավարար ֆինանսական միջոցներ՝ Աշխատանքների, Ապրանքների եւ (կամ) Ծառայությունների պայմանագրից ծագող իր պարտավորությունները բավարարելու նպատակով:

Շահագործում եւ սպասարկում

16. Վարկառուն ապահովում է, որ կատարվեն համապատասխան բյուջետային եւ մարդկային ռեսուրսների հատկացումներ Ծրագրի օբյեկտների շարունակական ՇԵՄ-ի համար՝ դրանք շահագործման մեջ դնելուց հետո:

Կառավարում եւ պայքար կոռուպցիայի դեմ

17. Վարկառուն եւ ԾԻՄ-ը՝ ա) համապատասխանում են ԱԶԲ-ի Հակակոռուպցիոն քաղաքականությանը (1998 թվական, առ այսօր կատարված փոփոխություններով) եւ ընդունում, որ ԱԶԲ-ն իրեն իրավունք է վերապահում ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով քննություն իրականացնելու Ծրագրի հետ կապված որեւէ առերեսույթ կոռուպցիոն, խարդախության, դավադրական կամ հարկադրանքի գործելակերպի առնչությամբ, ինչպես նաեւ բ) համագործակցում են ցանկացած նման քննության եւ ցուցաբերում ողջ անհրաժեշտ աջակցությունը՝ այդ քննության հաջող ավարտի համար:

18. Վարկառուն եւ ԾԻՄ-ը ապահովում են, որ բոլոր մրցութային փաստաթղթերում եւ պայմանագրերում ներառվեն ԱԶԲ-ի համար ընդունելի հակակոռուպցիոն դրույթներ, ներառյալ՝ կատարող եւ իրականացնող մարմինների եւ բոլոր կապալառուների, մատակարարների, խորհրդատուների եւ այլ ծառայություն մատուցողների գրառումները եւ հաշիվներն աուդիտի ենթարկելու եւ ուսումնասիրելու ԱԶԲ-ի իրավունքը սահմանող դրույթները, այնքանով, որքանով դրանք առնչվում են Ծրագրին:

19. Վարկառուն եւ ԾԻՄ-ը իրենց կայքերում տրամադրում են Ծրագրի մասին թարմացված տեղեկատվություն, ներառյալ՝ Ծրագրի կատարողականի, բիզնես հնարավորությունների, մրցութային գործընթացի եւ ուղենիշների, մրցույթների արդյունքների մասին տեղեկատվությունը եւ ընթացքի մասին ամփոփ հաշվետվությունները: